

առաջին անգամն էր որ ի լոյս կը հանէր Հայոց
համար:

Հոռմ Լեւոնեան Վարժարանի Մատենա-
դարանը կայ «Տոմարաց գիրք», մը. ետեւը
գրուած. «Յիշատակ է այս գիրքս Տեառն Սար-
գիս վ. ի Թոխատեցւոյ եւ Եպիսկոպոսին Ծննդոյ
Ս. Մարիամ Եգիպտացոյ թվին Քի. ՌՁԼԱին
(= 1731) օգոստոսի ԺԸին»:

Նոյն խօսքը կը գտնուի նաեւ «Կրթութիւն
աղօթից», վենետ. 1718 գրքին վրայ:

Իսկ Ս. Մարիամ Եգիպտացի Հիւրանոցի
գրութիւններուն մէջ կը յիշուին՝

Սարգիս Եպս. Գասպարեանի (Եւդոկիացի)
եւ իր Սիմէոն աշակերտին հոգւոց համար տա-
րեկան 103 մշտնջենաւոր պատարագ գրուած
է, որոնք կը կատարուին: 1731 Օգ.ին Սուքիաս
Եպս. կը գրէ թէ մի մի պատարագ Սարգիս
Եպս.ին համար ըսեր, եւ առեր է (դրամը).
1734 Ապրիլին նոյն դիտման տասը պատարագ
ըսեր է եւն: Հետաքրքրական է հետեւեալը՝
1734 Յունիսին կ'ըսէ. «Խ պտգ. մէկ սահաթ
առի Սարգիս Եպ.էն, եւ առի»: Նոյնը 1737
Յունուարին կ'ըսէ. «Ժ պտգ. սարգիս Եպ.ին
փոքր սահաթին ասի»:

Վատիկանեան Մատենադարանի հայ ձե-
ռագրի մը (թ. 33) ետեւը, — որ է Եպիսկո-